ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **25.12.2015**թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին
Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ն. Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ա.Մարտիրոսյան ՀՀ ՏԿԱԻ նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության գլխավոր մասնագետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

25.12.2015թ. **ժ. 13.00**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի տարեվերջյան տեղեկատվությունը մարզում կատարված աշխատանքների, մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի, զարգացման ծրագրերի ընթացքի և հետագա անելիքների մասին:

2. Հայտարարություններ

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի շնորհավորական խոսքը մարզխորհրդի անդամներին՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Տարեվերջյան մարզխորհրդի նիստին մարզպետ Սարգիս Սահակյանը ամփոփեց 2015 թվականի ընթացքում մարզում կատարված աշխատանքները, տեղեկատվություն ներկայացրեց մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի, զարգացման ծրագրերի ընթացքի և հետագա անելիքների մասին:

Մարզպետը նշեց, որ տարին ընդհանուր առմամբ բավականին հաջող էր մարզի համար: Դա պայմանավորված էր մարզի ղեկավարության, համայնքների ղեկավարների, դպրոցների տնօրենների, մարզային այլ կառույցների համատեղ և համագործակցված աշխատանքով:

Անդրադառնալով ունեցած ձեռքբերումներին, մարզպետն ասաց, որ դեկտեմբերի 24-ի դրությամբ մարզում կատարվել է մոտ 335 ծրագիր, որի համար ֆինանսավորումը կազմում է 42,974,663.1 հազար դրամ: Այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝

41,139,507.1 հազար դրամ, բարեգործական կազմակերպությունների, այլ ծրագրերով, անհատ բարերարների և մասնավոր ներդրողների միջոցներով հատկացումներ՝ 1,434,970.9 հազար դրամ, մարզի համայնքների բյուջեներից հատկացումներ՝ 400,185.1 հազար դրամ:

Տարվա ընթացքում սոցիալական ապահովության, քաղաքաշինության, առողջապահության, գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում, ջրամատակարարման, ճանապարհաշինության և գազիֆիկացման բնագավառներում ներդրումային գործունեություն են ծավալվել ինչպես պետական բյուջեի հատկացումներով, այնպես էլ միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների, բարեգործական ընկերությունների կողմից:

Մարզպետ Ս.Սահակյանն անդրադարձավ նաև 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին: Նա նշեց, որ նախատեսված ռազմավարությամբ նախատեսվում են հանրապետությունում և մարզում գործող տարբեր ծրագրերի, բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների և մասնավոր ներդրողների հետ տարվող նոր աշխատանքներ:

Սարգիս Սահակյանը անդրադարձավ նոյեմբերի 11-ին Արագածոտնի մարզպետի և մարզպետարանի պատասխանատուների մասնակցությամբ նախագահ Սերժ Սարգսյանի մոտ կայացած խորհրդակցությանը, որտեղ քննարկվեցին մարզի 2014թ. և 2015թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առկա հիմնախնդիրների, գերակայությունների և զարգացման ծրագրերին վերաբերող հարցեր: Հանդիպման ընթացքում երկրի ղեկավարը մի շարք հանձնարարականներ տվեց տարբեր նախարարություններին՝ մարզում իրականացվող ծրագրերն ընդլայնելու ուղղությամբ: Այդ առնչությամբ մարզպետը համայնքապետերին հորդորեց ակտիվորեն ներգրավվել իրականացվող ներդրումային ծրագրերում:

Հայտարարություններով հանդես եկան մարզպետի տեղակալ Մ. Աբգարյանը, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյանը, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու.Ազատյանը: Մ.Աբգարյանը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների կազմակերպման և բյուջեի տնօրինման հարցերին :Ս.Հովսեփյանը առաջարկեց համայնքապետերին հաշվետվություններում ընդգրկել ինտերնետային կապի որակի մասին տեղեկատվությունը,Յու.Ազատյանը անդրադարձավ նախարարության հանձնարարականների կատարման ժամկետներին: ՀՀ ՏԿԱԻ նախարարության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը իր ելույթում նշեց 2016թվականին համայնքներ այցելելու և ուսումնասիրություններ կատարելու ծրագրերի մասին :

Նիստի ավարտին մարզպետ Սարգիս Սահակյանը շնորհավորեց Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթեց աշխատանքային հաջողություններ և նոր ձեռքբերումներ, խաղաղություն՝ բոլոր ընտանիքներին, Հայաստանի Հանրապետությանը և համայն հայությանը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ